

Վարդան Զ. Պետրոսյան

Բանասիր. գիտ. թեկնածու

vz.petrosyan@ysu.am

ORCID: 0000-0002-6141-5504

ՀԻՆ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՀՆՁԱԲԱՆԱԿԱՆ ՄԻ

ՀԻՄՆԱԽՆԴԻՐԻ ՄԱՍԻՆ^{*}

(վ (v)–ի, լ (լ)–ի և ու (ou)–ի

հնչույթահնչյունաբանական առնչությունները)

Ամփոփում

Հին հայերենի վ (v), լ (լ) և ու (ou) գրերով նշանակված լեզվական միավորների հնչաբանական բնութագրերի հարցը հայերենագիտության քննության նյութ է եղել դեռևս 19-րդ դ. վերջերից Հ. Հյուբշմանի աշխատություններում: Ըստ Հ. Հյուբշմանի՝ այդ երեք գրերով արտահայտվել է միևնույն հնչյունը (իմա՝ հնչույթը – Վ.Պ.), մի տարբերությամբ. եթե վ (v)–ն պարզ շփական բաղաձայն էր, ապա լ (լ)–ն և ու (ou)–ն, պայմանավորված դիրքային կիրառությամբ, երկրնույթ էին՝ կարող էին հանդիպել ինչպես բաղաձայնական՝ [v], այնպես էլ ձայնավորական՝ [u] արժեքով: Հնչույթաբանական առումով դա նշանակում է, որ վ (v), լ (լ), ու (ou) գրերով արտահայտվել են միևնույն հնչույթի երեք դիրքային տարբերակները՝ այլահնչակները: Հայերենագետների մեծ մասը, որոնք այս կամ այն կերպ անդրադարձել են խնդրին, հայեցակարգային առումով ընդունել է Հ. Հյուբշմանի հարացույցը (Ա. Մեյե, Ն. Մառ, Հ. Աճառյան, Ս. Ղազարյան, Է. Թումանյան, Հ. Մուրադյան)՝ դրանից շեղվելով միայն մասնավոր հարցերում: Ասվածը բնութագրական է հատկապես ու (ou)–ի դեպքում. վերոհիշյալ բոլոր հեղինակներն էլ հին հայերենի ու (ou)–ն համարել են երկու տառով նշանակված պարզ ձայնավոր՝ [u]: Այդ առումով բացառություն էր

^{*} Հոդվածն ընդունվել է տպագրության 20.09.2025:

Հ. Պեդերսընը, ըստ որի՝ հին հայերենի **ու** (օւ)–ն երկբարբառ էր: **Ու** (օւ)–ի երկբարբառային բնույթի մասին ակնարկել են նաև Ս. Ղազարյանը, Ա. Աբրահամյանը, Է. Թումանյանը և Վ. Համբարձումյանը: Է. Աղայանն առաջին հայերենագետն էր, որը 20–րդ դ. 60–ական թթ. հին հայերենի հնչույթային համակարգը քննեց իրապես հնչույթաբանական մոտեցումով՝ հիմք ընդունելով Ն. Տրուբեցկոյի մշակած գործառական հնչույթաբանության սկզբունքները, այն է՝ տարբերակիչ հատկանիշների և երկանդամ հակադրության: Դրանով հանդերձ, նշված հնչական բաղադրիչների բնութագրերի հարցում Է. Աղայանը նույնպես ընդհանուր առմամբ պաշտպանեց Հ. Հյուբշմանի հայեցակարգը: Ըստ Է. Աղայանի՝ նշված երեք հնչուններից բուն հնչույթը <Ու>–ն էր, որը ձայնորդ էր, իսկ **ու** (օւ)–ն, **վ** (v)–ն և **ւ** (ւ)–ը նրա դիրքային տարբերակները՝ ենթահնչույթներն էին: Սույն աշխատանքում, դարձյալ առաջնորդվելով գործառական հնչույթաբանության սկզբունքներով, ցույց է տրվում, որ՝ 1) **վ** (v)–ը և **ւ** (ւ)–ը հին հայերենի հնչույթային համակարգի լիիրավ անդամներ էին, չնայած այն հանգամանքին, որ երկուսն էլ ունեին կիրառության մասնակի սահմանափակում. այն է՝ **ւ** (ւ)–ով չէր կարող սկսվել բառը, իսկ բառավերջում **վ** (v) կարող էր լինել միայն **ո** (o) ձայնավորից հետո, եթե արտաբերվող հնչյունը **ու** (օւ) երկբարբառակերպը չէր (հմմտ. **բով** «մետաղը հալելու հնոց», ի հակադրություն **բու**–ի «բու թռչունը»): այլապես ձայնավորահաջորդ դիրքում՝ բառամիջում, թե բառավերջում, սովորական էր **ւ** (ւ)–ը, այլ ոչ թե՝ **վ** (v)–ը. 2) **ու** (օւ)–ով նշանակվել է ոչ թե պարզ ձայնավոր, այլ երկբարբառային կազմություն, ավելի ստույգ՝ երկբարբառակերպ: Այդ տեսակետի ակներև փաստարկներից է այն, որ **ւ** (ւ) կիսաձայնը, ինչպես և **յ** (i) կիսաձայնը, հանդիպում էր միայն երկբարբառակերպների կազմում և կարող էր ինքնուրույնաբար հերթագայվել ինչպես բաղաձայնների, այնպես էլ **յ** (i) կիսաձայնի հետ՝ ձևավորելով իմաստատարբերակիչ, այլ կերպ՝ հնչույթաբանական հակադրություններ (հմմտ. **բաւ** «սահման, ծայր» ~ **բաւն** «խոսք, ասացված» ~ **բառ** «բառ», **գոյն** «երանգ. ներկ» ~ **գոնն**–(եղ) «գույն տալ» և այլն): Ընդ որում, հնչույթաբանական հակադրություններ գործել են նաև նույն երկբարբառակերպների ձայնավորական բաղադրիչների միջև (հմմտ. **նաւ** «նավ» ~ **նու** «հարս», **չու** «երթ, ուղևորություն» ~ **չեւ** «դեռ չեղած, տակավին ոչ» և այլն): Իսկ դա նշանակում է, որ երկբարբառակերպների ձայնավորական և կիսաձայնական բաղադրիչների կապը թույլ էր, և նրանք կարող էին գործառել նաև առանձնաբար:

Բանալի բառեր – հնչույթ, այլահնչակ, երկբարբառակերպ, ձայնավոր, կիսաձայն, հնչույթաբանական հակադրություն, տարբերակիչ հատկանիշ, դիրքային տարբերակ, հերթագայություն, Հյուր-շման, Մեյն, Պեդերսեն, Աղայան, Թումանյան:

Vardan Z. Petrosyan

Candidate of Philological Sciences

ON A PHONOLOGICAL PROBLEM OF OLD ARMENIAN

(Phonetic-phonological relations of վ (v), լ (u), and ու (ou))

Abstract

The issue of the phonological characteristics of the linguistic units represented by the letters վ (v), լ (u), and ու (ou) in Old Armenian has been a topic of scholarly discussion since the late 19th century, particularly in the works of H. Hübschmann. He argued that all three letters reflected the same phoneme (i.e., phone – V.P.), with a key difference. Hübschmann claimed that վ (v) was a simple fricative consonant, whereas լ (u) and ու (ou), had a dual function. Depending on their position they could function either as consonants [v] or as vowels [u]. From a phonological perspective, this means that the letters վ (v), լ (u), and ու (ou) were merely different positional variants – allophones – of the same phoneme. Most Armenian linguists who have explored this topic in one way or another have, conceptually, accepted Hübschmann's **paradigm** (A. Meillet, N. Marr, H. Acharyan, S. Ghazaryan, E. Tumanyan, H. Muradyan) with slight variations. This is especially true in the case of ու (ou): all the scholars mentioned above considered Old Armenian ու (ou) to be a simple vowel [u] represented by two letters. Only H. Pedersen argued that Old Armenian ու (ou) was a diphthong. S. Ghazaryan, A. Abrahamyan, E. Tumanyan, and V. Hambardzumyan also supported this view. E. Aghayan was the first Armenian linguist who, in the 1960s, analyzed the phonemic system of Old Armenian from a phonological perspective drawing on N. Trubetzkoy's principles of functional phonology, which is based on the concepts of distinctive features and binary oppositions. Nonetheless, even Aghayan supported Hübschmann's concept on the phonological features of these sounds. Aghayan believed that the actual phoneme among the three was <Ու> (ou) - a sonorant, while ու (ou), վ (v), and լ (u) were its positional variants, i.e. sub-phonemes. Guided by the principles of functional phonology, we have

demonstrated that: 1) **վ** (v) and **լ** (լ) were integral members of the phonemic system of Old Armenian, despite some positional limitations. More specifically, a word could not begin with **լ** (լ), and **վ** (v) could only appear at the end of a word if it followed the vowel **ո** (o) and the resulting sound was not the diphthongoid **նլ** (ոլ) (compare: **բնվ** "a furnace for melting metal" vs. **բնլ** "owl"). Otherwise, in post-vocalic positions – both medial and final – **լ** (լ) was the usual form, not **վ** (v): 2) **նլ** (ոլ) represented not a simple vowel, but a diphthongic structure, more specifically a diphthongoid. This can be demonstrated by the fact that the semivowel **լ** (լ), like the semivowel **յ** (i), only appeared as part of diphthongs and could alternate independently with both consonants and the semivowel **յ** (i), forming phonological oppositions (contrastive units), i.e., phonological oppositions. (Compare: **բառ** "border, edge" ~ **բառի** "speech, saying" ~ **բառն** "word"; **գույն** "shade, color" ~ **գուշն**-(ել) "to color" etc.).

Moreover, phonological oppositions existed even between the vocalic components of the same diphthongoid (compare: **խառ** "ship" ~ **խառլ** "bride"; **չառ** "journey" ~ **չառլ** "not yet, still absent" etc.). This suggests that the connection between the vocalic and semivocalic elements of diphthongs was weak, and they could also function independently.

Keywords - phoneme, allophone, diphthongoid, vowel, semivowel, phonological opposition, distinctive feature, positional variant, alternation, Hübschmann, Meillet, Pedersen, Aghayan, Tumanyan:

Вардан З. Петросян

Канд. филолог. наук

ОБ ОДНОЙ ФОНЕМАТИЧЕСКОЙ ПРОБЛЕМЕ ДРЕВНЕАРМЯНСКОГО ЛИТЕРАТУРНОГО ЯЗЫКА (фонемно-фонетические соотношения **վ** (v), **լ** (լ) и **նլ** (ոլ))

Резюме

Вопрос фонематической характеристики языковых единиц, обозначаемых буквами **վ** (v), **լ** (լ) и **նլ** (ոլ) в древнеармянском языке, является предметом изучения в арменоведении с конца XIX века в трудах Г. Хюбшмана. По мнению Г. Хюбшмана, эти три буквы выражали один и тот звук (т.е. фонему – В.П.), с одной разницей: если **վ** (v) был простым фрикативным согласным, то **լ** (լ) и **նл**

(օւ) в силу позиционного использования имели двойственную природу: они могли встречаться как со значением согласного - [v], так и со значением гласного - [u]. В фонологическом плане это означает, что буквы **վ** (v), **լ** (u) и **ու** (օւ) выражались три позиционные варианты, т.е. аллофоны одной и той же фонемы. Большинство армянских языковедов, так или иначе обращавшихся к данной проблеме, концептуально приняли парадигму Г. Хюбшмана (А. Мейе, Н. Марр, Г. Ачарян, Казарян, Э. Агаян, Э. Туманян, О. Мурадян), отклоняясь от нее лишь в отдельных вопросах. Это особенно характерно для **ու** (օւ): все упомянутые авторы считали древнеармянский **ու** (օւ) простым гласным - [u], обозначаемым двумя буквами. Исключением в этом отношении был Х. Педерсен, по мнению которого древнеармянский **ու** (օւ) был дифтонгом. На дифтонгическую природу **ու** (օւ) указывали также Казарян, А. Абрамян, Э. Туманян и В. Амбарцумян. Э. Агаян был первым арменоведом, который в 60-х годах XX века исследовал фонологическую систему древнеармянского языка с подлинно фонологической точки зрения, основываясь на принципах функциональной фонологии, разработанных Н. Трубецким, а именно на дифференциальных признаках и бинарной оппозиции. Однако в вопросе о характеристике указанных фонематических компонентов Э. Агаян также в целом отстаивал концепцию Г. Хюбшмана. По мнению Э. Агаяна, из трёх упомянутых звуков собственно фонемой является <Ու>, являющийся сонантом, а **ու** (օւ), **վ** (v) и **լ** (u) – его позиционными вариантами, т.е. субфонемами. Руководствуясь принципами функциональной фонологии, мы показываем, что: 1) **վ** (v) и **լ** (u) были полноправными членами фонологической системы древнеармянского языка, несмотря на то, что оба имели частичное ограничение употребления. То есть слово не могло начинаться с **լ** (u), а в конце слова **վ** (v) мог встречаться только после гласной **ո** (o), если произносимый звук не был дифтонгоидом **ու** (օւ) (ср. **բով** “печь для плавки металла”, в отличие от **բու** “сова (птица)”). В противном случае, в позиции после гласной, в середине или конце слова, обычно встречался **լ** (u), а не **վ** (v); 2) **ու** (օւ) – не простой гласный, а дифтонг, точнее - дифтонгоид. Одним из очевидных аргументов в пользу этой точки зрения является то, что полугласный **լ** (u), как и полугласный **յ** (i), встречается только в составе дифтонгоидов и мог самостоятельно чередоваться как с согласными, так и с полугласным **յ** (i), образуя смыслоразличительные, или, другими словами, фонологические оппозиции (ср. **բալ** “грань, предел” ~ **բալի** “речь, изречение” ~ **բառ** “слово”, **գոյն** “окраска. оттенок” ~ **գուն** (ն) “придавать цвет” и т.д.). Более того, фонологические оппозиции существовали и между гласными компонентами одних и тех же дифтонгоидов (ср. **կալ** “корабль” ~ **կու** “невеста”, **չալ** “поход, путешествие” ~ **չա** “ещё нет, всё ещё”» и т.д.). Это означает, что связь

между гласными и полугласными компонентами дифтонгоидов была слабой, и они могли функционировать и отдельно.

Ключевые слова - фонема, аллофона, дифтонгоид, гласный, полугласный, фонологическая оппозиция, дифференциальный признак, позиционный вариант, чередование, Хюбшман, Мейе, Педерсен, Агаян, Тумаян

Մուտք

Դեռևս Հ. Հյուբշմանի ժամանակներից՝ 19-րդ դ. վերջ - 20-ի սկիզբ, հայերենագիտության մեջ, որպես կանոն, **վ** (v)-ի, **ւ** (u)-ի և **ու** (ou)-ի հնչույթահնչյունաբանական հարաբերակցության հարցերը քննվել են միասնաբար: Այդ իրողության հիմքերը, ըստ երևույթին, պիտի փնտրել հենց Հ. Հյուբշմանի արտահայտած դատողություններում:

Հ. Հյուբշմանը, նշելով, որ գրաբարյան հայերենի **վ**, **ւ** և **ու** տառերով արտահայտվող բաղադրիչների «արտասանության մասին հնարավոր չէ որևէ որոշակի բան ասել» (Հյուբշման, 2004, 165), բայցևայնպես, դրանց հնչյունական արժեքը որոշում է՝ ելակետ ընդունելով ավանդական, այն է՝ հետգրաբարյան արտասանությունը (հմմտ. «Արտասանության մեջ ևս **վ** և **ւ**, **ու**-ի միջև ոչ մի տարբերություն չի նկատվել ... **վ**-ն, այսպիսով, **v**-ի պարզ արժեքն ունի, մինչդեռ **ու**-ն և **ւ**-ն կրկնակի արժեք ունեն՝ **u**-ի և **v**-ի» (Հյուբշման, 2004, 70-71): Հմմտ. նաև. «... **v**-ի համար (կամ՝ **v** և **w**-ի) մենք 3 նշան ունենք ... » (Հյուբշման, 2004, 165): Ըստ էության՝ նրա կարծիքով **ու**, **ւ** և **վ** գրերով արտահայտվել է միևնույն հնչյունը (իմա՝ հնչույթը (?) - Վ.Պ.), որն ուներ կիսաձայնական արժեք (Հյուբշման, 2004, 166):

վ-ի, **ւ**-ի և **ու**-ի հնչյունական արժեքայնության հարցում ընդհանուր առմամբ Հ. Հյուբշմանի պատկերացումներին համահունչ են Հ. Մարկվարտի և Մ. Աբեդյանի տեսակետները (Մարկվարտ, 1962, 173-174. Աբեդյան, 1936, 10):

Ի տարբերություն վերջինների, Ա. Մեյեն և Ն. Մառը գրաբարյան **վ**-ին և **ւ**-ին վերագրել են հնչյունական (ըստ էության՝ հնչույթային՝ Վ.Պ.) տարբեր արժեքներ: Ըստ Ա. Մեյեի՝ «... այբուբենը ստեղծելիս դրանք երկու տարբեր հնչույթներ էին», որովհետև հին հայերենի այբուբենը «կրկնակի գործածություններ չունի» (Meillet, 1936, 48-49): Նա հնարավոր է համարել **ւ**-ի՝ բաղաձայնական **ու**-ի արժեք ունենալը (գրաբարյան **ու**-ին այդպիսի արժեք է վերագրվում բաղաձայնահաջորդ և ձայնավորա-

նախորդ դիրքում. հմմտ. **Նուարդ, թռոյ** «թվի», **պատռած** «պտույտ, ուրբ», **տռաք** «(մենք) տվեցինք» և այլն)՝ նկատելով, սակայն, որ, դրանով հանդերձ՝ **վ**-ի և **ւ**-ի հնչյունական տարբերությունը մեծ չէր (Meillet, 1936, 49): Ն. Մառը նույնպես **վ**-ը և **ւ**-ը համարում է «հնչյունական առումով երկու տարբեր մեծություններ»։ **վ**-ով նշանակվել է բաղաձայն, իսկ **ւ**-ով կիսաձայն հնչյուն (Мартъ, 1903, 6): Նկատելով, որ **ւ**-ը «սովորաբար խմբեր» (իմա՝ երկբարբառակերպներ՝ Վ.Պ.) է կազմում **ա, ե, ի, ո** ձայնավորների հետ, Ն. Մառը **ւ**-ի ինքնուրույն կիրառություն տեսնում է միայն հունական փոխառություններում, ինչպես՝ **Կաբս** (= Κυαξ[άροξ]) (Мартъ, 1903, 9):

Վ, ւ, ու գրերով արտահայտված միավորների հնչյունական արժեքի մասին Ա. Մեյեի և Ն. Մառի տեսակետներին ընդհանուր առմամբ համահունչ են նաև Հ. Աճառյանի դատողությունները (Աճառյան, 1984, 585–588):

Նշված բոլոր հայերենագետները համամիտ էին, սակայն, **ու** (օք)-ի հնչյունական արժեքայնության հարցում. նրանց կարծիքով **ու** (օք)-ն եղել է պարզ ձայնավոր, իսկ երկտառ գրությունը պիտի բացատրել Մաշտոցի կողմից հունական **օս**-ի գրության ընդօրինակումով:

Այդ տեսակետը, սակայն, բացարձակ չէր: Այսպես. 1) Հ. Պեդերսընը, որ Ա. Մեյեի և Ն. Մառի սերնդակիցն էր, հին հայերենի **ու** (օք)-ն համարել է երկբարբառ (Պեդերսըն, 1904, 37). 2) նույնպիսի տեսակետ հայտնել է Ա. Աբրահամյանը (Աբրահամյան, 1976, 4). 3) ըստ Ս. Ղազարյանի՝ «հայերենի **ու**-ն հինգերորդ դարում հավանաբար չի ունեցել **վ** (իմա՝ [v] – Վ.Պ.) հնչումը և ոչ էլ համընկել է ժամանակակից **ու**-ի (իմա՝ [u] – Վ.Պ.) արտասանության հետ. նա մոտավորապես արտասանվել է **ոու** (իմա՝ [ou] – Վ.Պ.) և հանդես է եկել մեկ վանկով» (Ղազարյան, 1961, 176). 4) Է. Թումանյանը հնարավոր է համարել, որ «**ու**-ի բաղադրյալ գրային նշանը արտացոլել է ամեննին էլ ոչ պարզ ձայնավոր [u], այլ մի հնչյուն, որը, ակնհայտ է, ուներ *երկբարբառային բնույթ՝ առանց հնչույթաբանական արժեքայնության*» (շեղը իմն է՝ Վ.Պ.) (Туманян, 1971, 27). 5) Վ. Համբարձումյանի կարծիքով **ու**-ն սկզբնապես (թերևս նախագրաբարյան փուլում ? – Վ.Պ.) չի եղել պարզ ձայնավոր, «այլ **ո** [o] և **ւ** [u] գրերի միջոցով ունեցել է երկբարբառային (մոտավորապես՝ ***ոու** (իմա՝ [*ou] – Վ.Պ.)) արտասանություն» (Համբարձումյան, 2018, 15):

1. Հիմնախնդրի ըմբռնումը հայերենագիտության մեջ

Պիտի նկատել, որ հեղինակներից և ոչ մեկի մոտեցումը հնչույթաբանական չէ բառիս խիստ գիտական նշանակությամբ: Նույնիսկ Ա. Մեյենի դատողությունները չի կարելի հնչույթաբանական համարել, չնայած որ նա գործածում է *հնչույթ* տերմինը, այլ ոչ թե՝ *հնչյուն*, ինչպես մյուսները: Եվ դա հասկանալի է, որովհետև նշված աշխատությունների ստեղծման շրջանում՝ 19-րդ դարի վերջ և 20-ի սկիզբ, հնչույթի մասին ուսմունքը դեռևս ձևավորման փուլում էր, և համեմատաբանները դրան առանձին կարևորություն չէին տալիս¹:

Է. Աղայանն առաջին հայերենագետն է, որը հին հայերենի հնչույթային համակարգը, այդ թվում՝ **վ**-ի, **ւ**-ի և **ու**-ի հնչույթահնչունաբանական հարաբերակցության հարցերը քննել է հնչույթաբանական որոշակի հայեցակարգի, այն է՝ Ն. Ս. Տրուբեցկոյի մշակած գործառական հնչույթաբանության (Трубецкой, 2000)² համաձայն՝ համադրելով բաշխական հնչույթաբանության (դետերիպտիվ լեզվաբանություն) սկզբունքների հետ: Դասական գրաբարի համաժամանակյա հնչույթաբանության տեսանկյունից Է. Աղայանը սահմանել է **ւ** (ւ)–ի, **վ** (v)–ի և **ու** (ou)–ի այլահնչակային (իր տերմինով՝ «ենթահնչույթային») հարաբերակցություն՝ դրանք համարելով «/ու/ հնչույթի ենթահնչույթները» (Աղայան, 1964, 187–189): Իհարկե, տեսականորեն նշված հնչյունների միջև այլահնչակային հարաբերություններ հնարավոր կլինեին, եթե իրականում գրաբարյան **ու** (ou)–ն եղել է պարզ ձայնավոր, ինչպես որ հակված է ընդունելու անվանի գիտնականը (հմմտ. «/ու/–ն ձայնորդ է և կարող է հանդես գալ իբրև ձայնավոր (**ու**)» (Աղայան, 1964, 96): Ընդ որում՝ ձայնավորական **ու**–ն, ինչպես և նրա այլահնչակային լծորդները՝ **ւ** (ւ), **վ** (v), ըստ Աղայանի հարացույցի, չունեն հնչույթային արժեքայություն (Աղայան, 1964, 191): Բայց արդյո՞ք գրաբարյան **ու** (ou)–ն իսկապես եղել է «երկանիշ գրով»

¹ Ա. Մեյեն «հնչույթ» տերմինը ներմուծել է իր «Esquisse ...»-ների 2-րդ՝ 1936-ի հրատարակության մեջ («Esquisse ...»-ների առաջին հրատարակությունը եղել է 1903-ին, նույն թվականին, ինչ որ Ն. Մառի «Հին հայերենի քերականությունը»), երբ հնչույթի մասին ուսմունքն արդեն զգալիորեն մշակված էր լեզվաբանական տարբեր կենտրոններում: Հնչույթի ըմբռնման հարցում Ա. Մեյեն հետևել է իր ուսուցչի՝ Ֆ. դը Մոսյուրի հայեցակարգին, որում հնչյունի և հնչույթի տարբերակման հիմնական չափանիշ է համարվում առաջինի՝ միակողմանի՝ միայն արտաբերական տակտով, իսկ երկրորդի՝ երկկողմանի՝ նաև ընկալողական տակտով օժտված լինելու հանգամանքը (Сосюр, 1977, 76. Մոսյուր, 2008, 67–68. Պետրոսյան, 2015, 76): Մի չափանիշ, որն առավել հետևողականորեն մշակված հնչույթաբանական հայեցակարգերի (գործառական, բաշխական, երկանդամ, երկաստիճան) տեսանկյունից հազիվ թե կարող է գիտական համարվել:

² Н. Трубецкой, Основы фонологии, М., 2000 (գերմաներեն բնագիրը լույս է տեսել 1939 թ., ռուսերեն 1-ին հրատ. 1960 թ.):

նշանակված պարզ ձայնավոր, այն է՝ [ս], ինչպես որ պնդել է պրոֆ. Աղայանը (Աղայան, 1964, 93): Եթե, այնուամենայնիվ, **ու** (օւ)–ն պարզ ձայնավոր չէր, այդ դեպքում չէին կարող լրացուցիչ բաշխման հարաբերություններ լինել առնվազն **ու** (օւ)–ի՝ մի կողմից, և **լ** (ւ)–ի ու **վ** (v)–ի միջև՝ մյուս կողմից, քանզի այդպիսի հարաբերություններ տիպաբանորեն հավաստված չեն բարդ և պարզ հնչյունների միջև:

Ըստ Հ. Մուրադյանի, ընդհակառակն, հին հայերենն ունեցել է **վ** (v) շրթնատամնային բաղաձայն հնչույթը, որի դիրքային գրային տարբերակներն էին նաև **լ** (ւ)–ը և **ու** (օւ)–ն: Ընդ որում, նրա կարծիքով նույնպես «**վ**–ն և **լ**–ը արտահայտում էին նույն բաղաձայն հնչյունը» (Մուրադյան, 1982, 231–235):

Է. Թումանյանը, մի կողմից, հարում է **վ**, **լ**, **ու** հնչյունների միջև այլահնչակային (= ենթահնչությային), այն է՝ լրացուցիչ բաշխման հարաբերությունների առկայության տեսակետին, սակայն առանց հստակեցնելու, թե որ հնչույթի դիրքային տարբերակներն էին նրանք (Туманян, 1971, 71)³, մյուս կողմից, գրաբարյան **ու**–ն, ըստ էության, համարում է երկբարբառակերպ (հմմտ. «Պիտի կարծել, որ **ու**–ի բարդ գրային նշանը արտացոլել է ոչ լիովին մաքուր [ս] ձայնավոր, այլ մի հնչյուն, որը, ակներև է, ունեցել է երկբարբառակերպ բնույթ, առանց հնչույթաբանական արժեքայնության», կամ՝ «Եթե կարելի է այդպես արտահայտվել, **ու** [ս] ձայնավորը գրաբարում անցումային բնույթի հնչույթ է» (Туманян, 1971, 27) (ընդգծ. մերն են – Վ.Պ.)) :

Վերոհիշյալ պատկերացումների առնչությամբ կարելի է նշել հետևյալը.

1) Ըստ էության, հին հայերենի **վ**, **լ** տառերով, **ու** տառակապակցությամբ նշանակված հնչական բաղադրիչներին հնչությային միևնույն արժեքը վերագրելու միտումի հիմքում (Մարկվարտ, Աբեղյան, Աղայան, Մուրադյան, Թումանյան) Հ. Հյուբշմանի տեսակետն է: Է. Աղայանն առաջին հայ լեզվաբանն էր, որն այդ դրույթը հետևողականորեն զարգացրեց որոշակի հնչույթաբանական հայեցակարգի հիման վրա: Ինչպես Հ. Հյուբշմանի, այնպես էլ Է. Աղայանի պատկերացումների հիմքում **վ**, **լ**, **ու** գրերով նշանակված հնչյունների հնչարտաբերական բնութագրերի մասին ավանդական արտասանությունն է իբրև շրթնատամնային [վ/v]⁴, այն

³ Ըստ էության, այդ տեսակետի կրողն էր նաև Հ. Հյուբշմանը, այն տարբերությամբ, որ նա հարցը չէր դիտարկում հնչույթաբանական տեսանկյունից:

⁴ «Ավանդական արտասանություն» արտահայտությունը, որ հայերենագիտության մեջ լայնորեն կիրառվում է գրաբարյան տեքստերի արդի արտասանության նշա-

դեպքում, երբ Հ. Հյուբշմանը խոստովանում է, որ հնարավոր չէ ճիշտ պատկերացում կազմել դրանց «արտասանության», այն է՝ հնչյունական արժեքի վերաբերյալ:

2) Ճիշտ է, հետազոտողների մեծ մասը, այդ թվում՝ Ա. Մեյեն և Ն. Մառը, երկգիր **ու** (ou)–ն համարել է պարզ ձայնավոր՝ [u], բայց, ի տարբերություն մյուսների, որոնք **վ** (v)–ին և **լ** (l)–ին վերագրել են միևնույն հնչյունական արժեքը, Ա. Մեյեն և Ն. Մառը, միմյանցից անկախ (որ շատ կարևոր է), այդ գրերով նշանակված միավորներին վերագրել են տարբեր հնչյունական արժեքներ այն պարզ և, ըստ իս, ճիշտ հիմնավորումով, որ մաշտոցյան այբուբենը «կրկնակի գործածություններ չունի» (Meillet, 1936, 10): Կարծում ենք՝ երկու անվանի հայագետների այս տեսակետի հավելյալ հիմնավորում կարող է ծառայել հնչույթաբանական տարբեր տեսություններում վաղուց նկատված իրողությունը, ըստ որի՝ հնչյունների ձայնաբանական նմանությունը (ըստ Մեյեի՝ **վ**–ը և **լ**–ն ունեն մոտ հնչարտաբերություն) դեռևս այդ հնչյունները միևնույն հնչույթին վերագրելու չափանիշ չէ (Зиндер, 1979, 52–53. Лайонз, 1978, 127–128): Ոչ հազվադեպ, օրինակ, միևնույն ձայնավորի կարճ ու երկար (հմմտ. անգ. *kin* [kin] «ազգուտակ» ~ *keen* [ki:n] «սուր, հաստու», *bin* [bin] «բունկեր» ~ *bean* [bi:n] «բակլա, ունդ» – (i ~ ī), *port* [pɔ:t] «նավահանգիստ» ~ *pot* [pɔ:t] «կճուճ, պուտուկ»– (ɔ ~ o), ֆրնս. *pâte* [pa:t] «խմոր, թթխմոր» ~ *patte* [pat] «թաթ» – (ā ~ a), *paume* [pɔ:m] «ափ (ձեռքի)» ~ *pomme* [pɔ:m] «խնձոր» – (ɔ ~ o), բաց և փակ (հմմտ. *fait* [fɛ] «փաստ» ~ *fée* [fe] «դիցանուշ, փերի», *mais* [mɛ] «բայց» ~ *mes* [me] «իմ» (= ոս. *mou*) – [ɛ]–[e]) արտաբերությունները վերաբերում են տարբեր հնչույթների, որովհետև համապատասխան լեզուներում դրանք ունեն իմաստատարբերակիչ արժեք:

3) **Ու**–ի մասին Ն. Մառի տեսակետը հակասական է. ասելով, որ **ա**, **ե**, **ի**, **ո** ձայնավորներից հետո **լ** (l)–ը «սովորաբար խմբեր» (իմա՝ երկբարբառակերպեր՝ Վ.Պ.) է կազմում, միաժամանակ **ու** (ou)–ն համարում է պարզ ձայնավոր:

4) Նշելով, որ **լ** (l)–ն ինքնուրույն (իմա՝ ոչ երկբարբառային՝ Վ.Պ.) կիրառություն ունի միայն հունական փոխառություններում, Ն. Մառը, ըստ

նակությամբ, մեր կարծիքով, ճիշտ չի արտացոլում իրողությունները, որովհետև ավանդականը հնի, նախկինի պահպանվածության տպավորություն է թողնում, տվյալ դեպքում, սակայն, այն ունի «ավանդույթով փոխանցված» իմաստը: Իսկ «ավանդույթով փոխանցվածը» իրականում գրաբարյան տեքստերի փոփոխված, այսպես ասած՝ *աշխարհաբարացած* արտասանությունն է, որը բազմաթիվ դեպքերում շատ հեռու է դրանց հինհայերենյան արտաբերությունից:

էության, մնում է հին հայերենի երկբարբառային կազմությունների մասին պատմահամեմատական հայերենագիտության մեջ ձևավորված այն մտայնության շրջանակներում, որ ձայնավորին նախորդող դիրքում **ւ** (ւ)–ը երկբարբառ (/երկբարբառակերպ) չէր կազմավորում, այնինչ՝ Մ. Աբեղյանն իր «Գրաբարի քերականության» մեջ տարբերակել է **ւո** (ւօ) երկբարբառ (հմմտ. ինչպես՝ **որդւոց, հոգւոց**) (Աբեղյան, 1936, 10. Աբեղյան, 1974, VI, 715):

5) Ըստ Է. Թումանյանի՝ ստացվում է, որ միևնույն հնչույթի այլաինչակներ կարող էին լինել պարզ ձայնավոր(ներ)ը և երկբարբառակերպը (իմա՝ բարդ հնչական միավորը):

Իսկ որքանով է հիմնավոր տեսակետը, ըստ որի **վ** (v)–ը, **ւ** (ւ)–ը և **ու** (օւ)–ն գտնվել են լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ, հետևաբար եղել են միևնույն հնչույթի դիրքային տարբերակները:

Կարծում ենք՝ նպատակահարմար է այս խնդրի քննությունը սկսել **ւ** (ւ)–ից, որովհետև վերոհիշյալ հարցի պատասխանը մեծապես պայմանավորված է նրանով՝ *այդ միավորն ինքնուրույն հնչույթ էր, թե՞ մեկ այլ հնչույթի դիրքային տարբերակը* (= այլահնչակը):

2. **Ի** (ւ)–ի, **վ** (v)–ի և **ու** (օւ)–ի հնչույթահնչյունաբանական բնութագրերն ըստ լեզվական փաստերի

Ի (ւ) կիսաձայնը, ինչպես որ **յ** (i)–ն, հանդիպում է միայն հնչույթաբանական բարդ միավորների՝ երկբարբառակերպների (հմմտ. **աւ** (aւ), **եւ** (eւ), **իւ** (iւ), **ու** (օւ), **ւա** (ւa), **ւե** (ւe), **ւէ** (ւē), **ւի** (ւi), **ւո** (ւօ)), եռաբարբառակերպների (հմմտ. **եաւ** (eaւ), **ւաւ** (ւaւ), **ւու** (ւօւ), **յաւ** (iaւ), **յեւ** (ieւ), **յիւ** (iiւ), **յու** (ioւ), **ւոյ** (ւօi), **ուո** (օւօ), **ուա** (օւa), **ուե** (օւe), **ուէ** (օւē), **ուի** (օւi)) և քառաբարբառակերպների (հմմտ. **ուայ** (օւai), **ուաւ** (օւaւ), **ուոյ** (օւօi), **ուեա** (օւea)) կազմում (Պետրոսյան, 2022, VI, 128–136. Պետրոսյան, 2023, I, 57–67): Ընդ որում, բառային կառուցվածքում որպես նշված միավորների բաղադրիչ, այն հանդիպում է բառամիջյան և բառավերջի դիրքերում՝ **ա** (a), **ե** (e), **ի** (i), **ո** (o) ձայնավորներից հետո: Այն է.

1) բառամիջում (հմմտ. **աւր** «օր», **եղ** «յուղ. ձեթ», **յաւդ** «հող, կապ», **յիւրմէ** (իւր–ի «իր» եզ. թ., բցռ. հլ.), **յոշիղայ** «խեցեքար», **յոզանէ** (ուլն–ի «վիզ, պարանոց» եզ. թ., բցռ. հլ.), **բեւր** «տասը հազար», **նաւազ** «նավավար», **վաւեր** «ստույգ», **յաւէտ** «ավելի, շատ», **հրաւիրակ** «հրավիրվելու գնացող», **այգոջ** «այգու(ն)» (այգի–ի եզ. թ., տր. հլ.), **շուրթն**

«շուրթ, շրթունք»,- **արդեաշք** «իրավ, անշուշտ», **լիռթիւն** «առատություն»,-
գինշոյ «գինու» (**գինի**-ի եզ. թ., սեռ.-տր. հլ.), **նոռոց** (**նու**-ի «հարսն»
 հզն. թ., սեռ.-տր. հլ.), **տոռոլ** (**տալ** «տալ» անկանոն բայի ենթակայ. դե-
 րբ.՝ անց. կատ.-ի **տու**- հիմքից), **նոռագ** «երգ, երաժշտություն», **լռանամ**
 «լվալ. մաքրել», **դիպոռած** «դեպք, անցք», **արոռեստ** «ճարտարություն, ա-
 րվեստ. արհեստ», **ստոռեր** «ստվեր, հովանի. ուրվական», **նոռեր**,
պատոռիրան «հրահանգ, պատգամ», **ջեռնոռին** «(նրանք) տաքանում էին»
 (**ջեռնում**-ի «տաքանալ. վառվել» անց. անկ. ժ., հզն. թ., 3-րդ դ.),- **տոռայց**
 «(ես) տալու եմ/տամ/ կտամ/պիտի տամ» (**տալ** «տալ» անկանոն բայի
 ստորադաս. 2-րդ ապառնու (կոնյունկտիվ) եզ. թ., 1-ին դ.), **արծոռեսց** «-
 արծիվների» (**արծուի**-ի «արծիվ» հզն. սեռ.-տր. հլ.), **տոռեալ** (լեր/ լերուք)
 «(դու/դուք) տրվա՛ծ եղիր/եղեք» (**տալ** անկանոն բայի բուն հրամ. կրա-
 վորածն խոնարհման եզ. և հզն. թվերի 2-րդ դեմքի ձևերը և այլն).

2) բառավերջում (հմմտ. **անիւ** «ակ», **արեւ** «արեգակ», **բու** «բու»,
թեւ (-ոյ, -ոց) «թռչունի թև. մարդու բազուկ», **թիւ** (թուոյ) «հաշիվ. Թվա-
 նշան», **կաւ** (-ոյ/-ու) «տիղմ. սպիտակ կամ բրտի կավ», **նաւ** «նավ», **նու**
 «հարս», **չու** «երթ, ուղևորություն, գաղթ», **սակաւ** «քիչ. նվազ. սուղ», **տիւ**
 «ցերեկ»,- **բարեաւ** «բարով, հաջողությամբ», **լեզուաւ** «լեզվով» (լեզու
 գոյ.-ի եզ., թ., գրծ. հլ.), **սեաւ** «սև», **տուաւ** «(նա) տվեց» (**տալ** անկանոն
 բայի անց. կատ. եզ. թ., 3-րդ դ.):

Գրաբարյան հայերենում բառը չէր կարող սկսվել **ւ** (ւ)-վ: Սա, ըստ
 ամենայնի, այն հիմնական իրողությունն է, **վ** (v)-ի հետ ենթադրվող հնչ-
 արտաբերական նմանության հետ միասին, որ հիմք է տվել այդ միա-
 վորին վերագրելու այլահնչակային (ըստ Է. Աղայանի՝ «ենթահնչոյթա-
 յին») կարգավիճակ:

Գործառական հնչոյթաբանության համաձայն հնչոյթի տարբե-
 րական առաջնային չափանիշ է նրա՝ հնչոյթաբանական (= իմաստա-
 տարբերակիչ) հակադրություններ ձևավորելու հատկությունը⁵: Ըստ
 այդմ, գրաբարյան **ւ** (ւ)-ը հնչոյթաբանական հակադրություններ է ձևա-
 վորում բազմաթիվ հնչոյթների հետ՝ ձայնորդների, ձայնեղ ու խուլ բա-
 դաձայնների, նաև հնչոյթային զրոյի (ø), ընդ որում՝ ինչպես բառամիջի
 դիրքում (հմմտ. **Առագ** «առաջինը. երեց» ~ **անաագ** «կլայեկ» (ԱԲՀԼ, 1988,
 39) ~ **աղագ** «սրընթաց. շուտ» (ւ ~ ն ~ ր), **սին** «սյուն» ~ **սին** «փուչ.

⁵ Այս սկզբունքն ընդհանուր է գործառական հնչոյթաբանության երկու հիմնական՝
Պրահայի և *Մոսկվայի դպրոցների* ներկայացուցիչների համար (Трубецкой, 2000,
 35-70. ОНС, 1964, 58-92. Реформатский, 1967, 207-217. Засорина, 1974, 92-98.
 Панов, 1979, 90-123):

ունայն» (ւ ~ ø), առ «օր» ~ առ «ոչխարի բուրդ»), այնպես էլ բառավերջի (հմմտ. բառ «սահման, ծայր» ~ բան «խոսք, ասացված» ~ բառ «բառ» ~ բաց «չփակված» (ւ ~ ն ~ ռ ~ ց), լառ ~ լաց «լաց լինելը, ողբ» ~ լառի «շան հեղուկ ուտելիք», թիւ «թվարկում» ~ թիգ «թզաչափ» ~ թի «թի» (ւ ~ զ ~ ø), թեւ «թև, բազուկ» ~ թեղ «կողմ» ~ թեղ «դեզ» (ւ ~ ր ~ ղ), ծառի «բաց կապույտ» ~ ծագի (ծագ-ի «ծայր, որևէ առարկայի վերջնային մասը» եզ. թ., սեռ.-տր. հլ.) (ւ ~ գ), կառ «տիղմ, ցեխ» ~ կայ «կենալը. մնալու տեղ» ~ կար «1. պարան. 2. գորություն, ուժ» (ւ ~ յ ~ ր),- հառ «թռչուն» ~ հառ «բարեհամբույր, քաղցրահայաց» ~ հառ «բեռան մեծ կապոց» ~ հառ «2. լկամ, սանձ» ~ հառ «ժամանելը. հասույթ» (ւ ~ ձ ~ կ ~ մ ~ ս) (Ղազարեան, 2004, 690-691), նառ «նավ» ~ նառ «առաջ, նախքան» ~ նայ «թաց» (ւ ~ խ ~ յ) և այլն): Այս հանգամանքը բավարար հիմք է ասելու, որ գրաբարյան ւ (ս)–ն ինքնուրույն հնչույթ էր⁶: Ըստ իս, ւ (ս)–ի հնչույթային ինքնուրույնության դրսևորումներ են նաև՝ 1) յ (i) > ւ (ս) հերթագայությունը ոյ (oi) – ու (ou) երկբարբառակերպների կազմում (հմմտ. բոյ > բոռական «բույսերին հատուկ», գոյն > գոն(-ել) «գույն տալ», լոյս > լոռ(-առ) «լուսատու» և այլն), 2) ւ // յ հերթագայությունը ու լծորդության բայերի անցյալ անկատարի եզակի թ. 3-րդ դ., որի վերջավորության յ-ի դիմաց մյուս

⁶ Որքանով մեզ հայտնի է, հնչույթաբանական տեսություններում չի քննարկվել հարց այն մասին, թե արդյո՞ք հնչույթի դիրքային տարբերակները առանձնաբար կարող են տարբերակիչ հակադրություններ ձևավորել այլ հնչույթների հետ: Մի կողմից՝ այսպիսի հարցադրումը կարող է անտրամաբանական թվալ, որովհետև հնչույթը (phoneme / фонема) և այլահնչակը (allophone / аллофон) մակարդակային տարբեր իրողություններ են, համապատասխանաբար՝ հնչույթային և այլահնչակային (երկրորդը ստորադաս է առաջինին), մյուս կողմից, սակայն, ինչպես է իրացվում հնչույթային հակադրությունը, չէ՞ որ խոսքային պլանում հնչույթը միշտ ներկայացված է իր հնչունական (= այլահնչակային) հնարավոր տարբերակներից մեկով: Այս դեպքում ինչպե՞ս է որոշվում բոլոր տարբերակներն են հակադրություն ձևավորում, թե՞ նրանցից միայն մեկը: Եթե միայն մեկը, ապա հատկապես ո՞րը: Կամ ինչո՞ւ բոլորը չեն կարող հակադրություն ձևավորել, երբ ներկայացնում են միևնույն հնչույթը: Օր., ըստ Մոսկվայի հնչույթաբանական դպրոցի (ՄՀԴ)՝ ռուս. вода [vada]՝ «ջուր», в воде [vade]՝ «ջրում», водный [vo'dnyj]՝ «ջրային», водовоз [vədavo's]՝ «ջրկիր» բառաձևերում և բաղադրյալ բառերում միևնույն вод- արմատի գրային օ-ն ներկայացված է երեք այլահնչակով՝ [a], [o], [ə], որոնք <O> հնչույթի ուժեղ և թույլ դիրքային տարբերակներն են՝ պայմանավորված բառային շեշտի տեղաշարժով: Հետևաբար հնչույթի հիմնական տարբերակն է [o]–ն, և այլ հնչույթների հետ հակադրությունն էլ ձևավորում է հենց [o]–ն, եթե նույնիսկ միմյանց հետ համեմատվում են, օր., водовоз-ի [vəd-]–ը և ви́д-ի [vi'd-]–ը (հմմտ. во́д- ~ ви́д «կերպ, ձև», во́д- ~ ве́д- (ве́д-омьѣ «հայտնի, ծանոթ»՝ вед-ать-ից «գիտենալ»)): Այսինքն՝ հնչույթաբանորեն չի կարող լինել [vad-] ~ [vi'd-], [vəd-] ~ [ve'd-] հակադրություն, այլ՝ միայն [vo'd-] ~ [vi'd-], [vo'd-] ~ [ve'd-]:

բոլոր ձևերն ունեն **լ** (հմմտ. **կիզուի** «(եա) այրում էի» (ե. թ., 1-ին դ.), **կիզուիր** «(դու) այրում էիր» (եզ. թ., 2-րդ դ.), **կիզուաք** «(մենք) այրում էինք» (հզն. թ., 1-ին դ.), **կիզուիք** «(դուք) այրում էիք» (հզն. թ., 2-րդ դ.), **կիզուին** «(նրանք) այրում էին» (հզն. թ., 3-րդ դ.), բայց՝ **կիզոյր** «(նա) այրում էր» (եզ. թ., 3-րդ դ.): Որ վերջին օրինակներում հնչյունափոխվում (/հերթագայվում) են հենց կիսաձայն-ձայնորդները, այլ ոչ թե երկբարբառակերպերն ամբողջությամբ, ինչպես որ հակված է կարծելու Է. Աղա-յանը (Աղայան, 1964, 104), կարծում ենք՝ վկայում են նաև **չու** «երթ, ուղևորություն» ~ **չև** «դեռ չեղած, տակավին ոչ. և ոչ» (ԱԲՀԼ, 1988, 670. Ղազարեան, 2004, 1046), **բու** «բու» ~ **բաւ** «սահման. չափ», **կու** «գոմաղբ» ~ **կաւ** «տիղմ. սպիտակ կամ բրտի կավ», **նու** «հարս» ~ **նաւ** «նավ» և այլն հնչյութաբանական հակադրությունները, ուր նույնպես իմաստատարբերակիչ գործոն են ոչ թե երկբարբառակերպերն ամբողջությամբ, այլ միայն նրանց ձայնավորական բաղադրիչները՝ **ո** (o) ~ **ե** (e), **ո** (o) ~ **ա** (a): Ըստ էության, **ի** > **ո**, այլ ոչ թե **իւ** > **ու**, այլ կերպ՝ դարձյալ ձայնավորական հնչյունափոխության հետ գործ ունենք **թ/ւ-թուոյ, տ/ւ-տուրնջեան, պատ/ւ-պատուել** տիպի հերթագայություններում: Երկբարբառակերպների և՛ կիսաձայնային, և՛ ձայնավորական բաղադրիչների հակադրությունը վկայում է այն մասին, որ՝ 1) դրանք հնչյութային սերտ միասնություններ չէին, այլ կերպ՝ բուն երկբարբառներ չէին և կարող էին գործառել ինքնուրույնաբար, 2) իրականում **ու** (ou)-ն պարզ ձայնավոր չէր, այլ երկբարբառակերպ, որովհետև ինքնուրույնաբար են գործառում նաև **ու** (ou)-ի բաղադրիչները՝ **ո** (o)-ն և **ւ** (v)-ը: Ավելին, **ու** (ou)-ի ձայնորդական բաղադրիչի՝ **ւ** (v)-ի ինքնուրույն գործառելու կարողությունը հիմք է տալիս բառակերջի դիրքում ձանաչելու նաև **ւ** (v) ~ **վ** (v) հնչյութաբանական հակադրություն (հմմտ. **բու** «բու թռչունը» ~ **բով** «մետաղը հալելու հնոց», **կու** «թրիք» ~ **կով** «կով»):

Հիմնահարցի լուծման առումով կարևոր նշանակություն ունեն նաև ձևաբանական իրողությունները: Բառակերջի դիրքում **ու**-ն, հնչաբանական գործառության բացի (հմմտ. **լեզու, ուրու, արու, կծու** և այլն), իրականացնում է նաև ձևաբանական գործառույթ. այն **ու** արտաքին հոլովման ենթարկվող բառերի եզ. սեռ.-տր. և գործ. հոլովների ցուցիչն է (հմմտ. **առաւաւտ-ու** /(առաւօտ-ու), «առավոտի /առավոտով», **գանձ-ու** «գանձի/գանձով», **գարդ-ու** «գարդի/գարդով», **ծով-ու** «ծովի/ծովով», **հաւ-ու** «հավի/հավով», **վրիժ**(< **վրէժ**)-**ու** «վրեժի /վրեժով», **փոք-ու** «փոքրի/փոքրով» և այլն): Որպես եզ. թ., գործ. հլ. ցուցիչ՝ **ու**-ն համարժեք է **ա** պարզ և **ի-ա, ո-ա** խառն հոլովումների **-աւ** (հմմտ. **տիտանաւ** «տի-

տանով», **Արշակաւ, Հայկաւ, գուսանաւ, մեծաւ, աղաւնեաւ, բարեաւ, թշնամեաւ, կենդանեաւ** և այլն), *ի* պարզ հոլովման **-իւ** (հմմտ. **ամբողջիւ, այծիւ, դարիւ** («բարձր տեղ» նշանակությամբ), **ծայնիւ, երեւութիւ** (< **երեւոյթ**), **բուպէիւ** և այլն) վերջավորություններին: Դա նշանակում է, որ այդ դիրքում **ու**-ն պարզ հնչւոյթի ցուցիչ չէ, այլ՝ երկբաղադրիչ միավորի, այն է՝ երկբարբառակերպի:

Ըստ իս՝ գրաբարյան **ու**-ի երկբարբառակերպային բնույթի մասին է վկայում է նաև այն իրողությունը, որ հին հայերենի հնչաշղթայում (բառ, ձևույթ, վանկ) կարող էր լինել **ւի** (*ւի*) տիպի, այսինքն՝ ձայնորդի և ձայնավորի անմիջական հաջորդականություն, օր.⁷ **ուի** եռաբարբառակերպի կազմում (հմմտ. **նուիրակ, պատուիրակ, պատուիրան, զենուի** «(ես) մորթում էի», **ջենուիր** «(դու) տաքանում էիր») և այլն), բայց չէր կարող լինել երկու կիսաձայնի (իմա՝ երկու ձայնորդի)՝ **ւյ** (*ւյ*), անմիջական հաջորդականություն: Երկու կիսաձայնների միջև չկա հնչարտաբերական հատկանիշների բավարար հակադրություն (= կոնտրաստ), որպեսզի նրանք հնչաշղթայում անմիջականորեն հաջորդեն մեկը մյուսին, իսկ ձայնորդի և ձայնավորի միջև հակադրությունը (= կոնտրաստը) բավարար է այդպիսի հաջորդականություն ձևավորելու համար: Դա ևս վկայություն է այն մասին, որ հին հայերենի **ու** (օւ)–ի կազմում **ւ** (*ւ*)–ն ինքնուրույն բաղադրիչ էր, ի տարբերություն արդի հայերենի, ուր **ու** (օւ)–ի երկու գրային նշանները խորհրդանշում են ոչ թե առանձին հնչյուններ (/հնչւոյթներ), այլ մեկ ձայնավոր հնչյուն (/հնչւոյթ)՝ ավանդական (= գրաբարյան) գրության պահպանումով, այդ պատճառով էլ (**ո**)ւյ հաջորդականությունը հնարավոր է (հմմտ. **ասույթ, դրույթ, իմույթ, խոսույթ, հանրույթ, հնչույթ, ձևույթ** և այլն. բոլորն էլ **-ույթ** վերջածանցով տերմինային նորակազմություններ)⁷:

Կարծում ենք՝ երկրորդական չէ նաև այն հանգամանքը, որ թեպետև հին հայերենում **ւ** (*ւ*)–ով բառ չի սկսվել, բայց սկսվել է վանկ բառի կազմում (հմմտ. **աւազ, աւազ, նաւազ** «նավաստի», **նաւակ** «փոքր նավ», **հաւան** «հավանություն», **վաւաշ** «պագշոտ, անառակ» և այլն), որից կարելի է ենթադրել, որ հնչարտաբերական (առոգանական) մի մա-

⁷ Ի դեպ, հին հայերենում միևնույն վանկի կազմում առհասարակ հնարավոր չէր երկու ձայնորդի անմիջական հաջորդականություն. եթե նրանց միջև չի եղել այլ ձայնավոր, արտաբերվել է **ը** գաղտնավանկը (հմմտ. **դուռ(ը)ն, ն(ը)ման, թոռ(ը)ն, խուռ(ը)ն, նուռ(ը)ն, փուռ(ը)ն** և այլն): Ձայնորդների անմիջական հաջորդականությունը հնարավոր էր, եթե դրանք վերաբերում էին տարբեր վանկերի (հմմտ. **բառւան** «վերցնել, բարձրացնել», դառւան «ետ դառնալ, վերադառնալ», ոռւան «կատաղի ձայներ հանել, մոնչալ» և այլն):

կարդակում⁸, այնուամենայնիվ, **լ** (լ)–ը ձայնավորին նախորդող դիրքում կարող էր լինել սկզբնահնչյուն՝ կազմավորելով երկբարբառակերպ, եռաբարբառակերպ և այլն, ինչպես նշված օրինակներում **լա** (լա) երկբարբառակերպը:

վ (v)–ի՝ որպես գրաբարյան հայերենի հնչույթային համակարգի ինքնուրույն միավորի մասին են վկայում հետևյալ գործառական հակադրությունները. **վախ** (–ի) «զառիթափ» ~ **բախ** «բախում», **վարդ** «վարդ ծաղիկը» ~ **բարդ** «չորացրած խոտի դեզ» (վ ~ բ), **վարդ** ~ **մարդ** «մարդ» (վ ~ մ), **վաճառ** (–ի) «առևտուր» ~ **կաճառ** (–ի) «հանդես, ժողով» (վ ~ կ), **վարգել** (–իմ) «արշավել, սուրալ» ~ **կարգել** «կարգավորել. նշանակել» (վ ~ կ), **վարգել** ~ **արգել** (–ոց) «արգելք. բանտ», **վարդ** ~ **արդ** «այժմ, ներկայումս» (վ ~ ծ), **վեր** «վերևը» ~ **ներ** «մեջ» (նախդիր), **վեր** (սեռ.–տր. վիրի) «վերք, խոց» ~ **ներ** (սեռ.–տր. նիրի) «տագերկին», **վիզն** «մի տեսակ խոտաբույս՝ վիկ, գյուլով» ~ **նիզն** (նիզ–ի «սողնակ» որոշյալ առումը) (վ ~ ն), **վայր** (–ի) «տեղ. սահման» ~ **գայր** (գալ բայի անց. անկ., եզ. թ., 3–րդ դ.), **վէտ** «ջրի ծփանք» ~ **գէտ**– (գիտեմ «գիտենալ» բայի արմատը), **վէս** «գոռոզ, հանդուգն» ~ **գէս** «վարս. ծան», **վնաս** «նյութական կորուստ» ~ **գնաս** (գնամ «առաջ շարժվել» բայի սահմ. նրկ., եզ. թ., 2–րդ դ.) (վ ~ գ) և այլն:

Ու (օւ)–ի բաղադրյալ՝ երկբարբառային բնույթի ընդունումից հետևում է, որ «ու – (որևէ) ձայնավոր» հակադրական հարաբերությունները, որոնք նշում է պրոֆ. Աղայանը (հմմտ. **ուստի** – **սաստի**, **ունչ** – **խնչ**, **ոզ** – **ել**, **հուն** – **հին**, **նու** – **նա**, **լու** – **լի** և այլն), նվազագույն զույգով հակադրություններ չեն, հետևաբար էական (ռելևանտ / relevant / релевант–ныи) չեն հնչույթային բնութագրի որոշման տեսանկյունից, իսկ **մորձ**–**մորձ**, **ուր**–**ուր** զույգերում առկա է **լ** (լ) ~ զրո (օ) հնչույթային հակադրություն, այլ ոչ թե՛ [ս] ~ [օ]:

Այն, որ որևէ դիրքում հնչույթաբանական հակադրություն ձևավորելու կարողության բացակայությունը, այլ կերպ՝ լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ գտնվելը, ինչպիսին էր բառակզբի դիրքը գրաբարյան **վ** (v)–ի և **լ** (լ)–ի համար, դեռևս բավարար հիմք չէ համապատասխան հնչյունները համարելու միևնույն հնչույթի դիրքային տարբերակներ, վկայում են նաև այլ լեզուների տվյալները: Այսպես, անգլե–

⁸ Ունանք վանքը նույնպես համարում են լեզվական, ավելի ստույգ՝ բառային կառուցվածքի բաղադրիչ, այլ կերպ՝ լեզվական առանձին մակարդակի միավոր (ՕԳ, 1983, 135–138. ՕԳ(ԲՏԳ), 1972, 104–105):

Ըստ էության՝ 5-րդ դարասկզբին հունարենի երկգիր **ov**-ին պարզ ձայնավորի՝ [u], հնչյունական արժեք (հմմտ. **δούλος** [dúlos] «ստրուկ», **Μούσα** [músa] «մուսա» և այլն) վերագրելն ունի վարկածային բնույթ, որովհետև իրականում հայտնի չէ՝ Մաշտոցի ժամանակներում այն արդե՞ն վերածվել էր պարզ [u]-ի, թե՞ դա տեղի է ունեցել ավելի ուշ, ինչպես որ հայտնի չէ՝ երբևանից է բաղաձայնահաջորդ և ձայնավորանախորդ դիրքում հայերենի **ու** (օւ)–ն սկսել արտաբերվել իբրև շրթնատամնային [v] (հմմտ. **առույ** [առվո], **արուեստ** [արվեստ], **բուէճ** [բվէճ], **լեզուի** [լեզվի], **չուեմ** [չվեմ] և այլն)¹⁰: Գուցե՞ դա տեղի է ունեցել գրաբարի վերջին և միջին հայերենի սկզբնավորման շրջանում: Հետևաբար մենք ճիշտ չենք համարում վարկածային այդ դրույթի վրա տեսակետ կառուցելը: Մյուս կողմից, գրաբարյան պարզ ձայնավորները հնչունափոխվելիս ոչ միայն վերածվել են **ը** (ə)–ի, ինչպես է. Աղայանի նշած օրինակներում, այլև կիսաձայն **ւ** (ʋ)–ի (հմմտ. **որդի** – **որդւյ**, **ոգի** – **ոգւյ**, **ոսկի** – **ոսկւյ**, **անդի** «նախիր» – **անդւյ** «նախիր», **պատանի** – **պատանւյ** և այլն): Ուրեմն նշված հնչունափոխական օրինակները չեն ներառում հնարավոր բոլոր դեպքերը, ըստ այդմ՝ վերոհիշյալ դրույթը բացարձակ չէ:

Ինչպես երևում է, գրաբարյան **ու** (օւ)–ի՝ որպես պարզ ձայնավորի դրույթին հակասում են բազմաթիվ լեզվական փաստեր, որոնք նկատի չեն առնվել նախորդ ուսումնասիրողների, այդ թվում՝ պրոֆ. է. Աղայանի կողմից: Այլապես հազիվ թե այդպիսի համոզվածությամբ պնդեին, որ **ու** (օւ)–ն եղել է պարզ ձայնավոր և այդ դրույթի վրա կառուցվեր մի ամբողջ հայեցակարգ: **Ու** (օւ)–ի հնչույթաբանական կարգավիճակով պայմանավորված է ոչ միայն **վ** (v) – **ւ** (ʋ) – **ու** (օւ) հարաբերակցության բնույթը՝ դրանք միևնույն հնչույթի այլահնչակներն են, թե՞ ինքնուրույն հնչույթներ, այլև, ինչպես կտեսնենք ստորև, էականորեն փոխվում է հին հայերենի ձայնավորական և երկբարբառային համակարգերի պատկերն առհասարակ:

3. Հունարան քերականությունների տվյալները

Ի վերջո, որքան էլ թերագնահատենք հին քերականների լեզվաբանական (պայմանական առումով) գիտելիքները, ճիշտ չէ դրանց

¹⁰ Կարծում ենք՝ այդ անցումը տեղի է ունեցել **ու** (օւ) > **ւ** (ʋ) > **վ** (v) հաջորդականությամբ, այսինքն՝ նախ **ո** (o) ձայնավորի կորուստ, ապա երկշրթնային **ւ** (ʋ) ձայնորդի անցում շրթնատամնային **վ** (v)–ի (հմմտ. **չուեմ** > ***չւեմ** > **չվեմ**):

անտեսումը, մանավանդ, երբ քննության նյութն այն լեզուն է, որի կրողներն էին իրենք: Ըստ այդմ, կարծում ենք՝ կարևոր է քննադատաբար հաշվի առնել նաև Դ. Թրակացու «Արուեստ Դիոնիսեայ քերականի» հայերեն թարգմանության (այսուհետ՝ «Քերականություն»՝ Վ.Պ.) և նրա հայ մեկնիչների աշխատանքներում մեզ հետաքրքրող հարցի առնչությամբ առկա տվյալները: Այսպես, Թրակացու «Քերականության» մեջ տարբերակվում է ութ ձայնավոր՝ **ա, ե, է, (ը), ի, ո, ւ, օ**, իսկ **ու**-ն, **աւ**-ի, **եւ**-ի, **աի**-ի և **ոի**-ի հետ, դասվում է բուն երկբարբառների («երկբարբառք բունք») մեջ¹¹: Ձայնավորներից **է**-ն և **օ**-ն համարվում են երկար, **ե**-ն, **ո**-ն և **ւ**-ը՝ կարճ («սուղք»), իսկ **ա**-ն, **ը**-ն և **ի**-ն՝ «երկամանակք», այսինքն՝ երկբնությո՝ և՛ երկար, և՛ կարճ (հմմտ. «վասն զի երբեմն ձգտին եւ երբեմն ամփոփին») (Ադոնց, III, 2008, 5): Ձայնավորների և երկբարբառների կազմի և տեսակների ընդհանուր առմամբ նույնաբնույթ պատկերացումներ առկա են նաև «Քերականության» մեկնիչների՝ Դավիթ փիլիսոփայի, Անանունի, Մովսես Քերդողի, Ստեփանոս Սյունեցու, Գրիգոր Մագիստրոսի և Համամ Արևելցու աշխատանքներում (Ադոնց, III, 2008, 94, 132, 162–163, 199, 234–235, 256–257)¹²:

Առանձին կարևորություն ունեն հատկապես «Քերականության» և նրա առաջին չորս մեկնությունների տվյալները, որքանով դրանց հեղինակները եղել են գրաբարյան հայերենի լեզվակիրները¹³: Նրանց

¹¹ Ուշագրավ է, որ, «բուն» (իմա՝ իսկական՝ Վ.Պ.) երկբարբառներից բացի, այդ հեղինակներից ոմանք տարբերակում են նաև «բոնաբարբառք» (իմա՝ կեղծ երկբարբառներ՝ Վ.Պ.) կամ «այլ երկբարբառք», ինչպես՝ **էւ, ըւ, իւ** (Ադոնց, III, 2008, 5, 132, 164–165):

¹² Իհարկե, առանձին հեղինակների մոտ կան Դ. Թրակացու «Քերականությունից» որոշ «շեղումներ»: Մասնավորապես. 1) Ս. Սյունեցին հունական **օ**-ի փոխարեն կիրառում է **ոլ** տառախումբը, 2) առանձին դեպքերում ձայնավորների և երկբարբառների կազմն ամբողջությամբ չի թվարկվում կամ առնվազն առկա տեքստերում ոչ բոլորն են պահպանվել և այլն:

¹³ Մեկնիչների անձնավորության հարցը գիտական գրականության մեջ դեռևս համոզիչ լուծում չի ստացել: Ավանդությունը Դավիթ փիլիսոփային նույնացնում է Դավիթ Անհաղթի (V–VI դդ.), Մովսես Քերդողին՝ Մովսես Խորենացու (Քերթողահոր) (V դ.), Ս. Սյունեցուն՝ VIII դ. նույնանուն հեղինակի հետ և այլն: Ըստ այդմ՝ նշված մեկնությունների ստեղծման ժամանակը տատանվում է V–VIII դդ. միջև: Ն. Ադոնցը, սակայն, մերժում է այդ նույնացումները և վերոհիշյալ մեկնիչների ապրած ժամանակը տեղավորում է VI դ. վերջերից մինչև VIII-ի կեսերն ընկած ժամանակաշրջանում (Ադոնց, III, 2008, LXXIX–LXXXVII): Մի շարք նկատառումներով Ն. Ադոնցի տեսակետի դեմ առարկում է Գ. Ջահուկյանը՝ ավելի հակված լինելով հաշվի առնելու ավանդույթը, որը «... Դավթին, Մովսեսին և Մամբրեին համարում է Սահակի և Մեսրոպի աշակերտներ ...»: Իհարկե, ինչպես Ն. Ադոնցը, Գ. Ջահուկյանը ևս չի հավակնում հիմնավանդի վերջնական լուծման

մեկնություններում ու (օք)-ն միանշանակ բուն երկբարբառների շարքում է: Այն, որ. 1) **Ի** (յ)-ը դասվել է ձայնավորների մեջ, հասկանալի է, որովհետև կիսաձայն-ձայնորդ էր և իր ձայնաբանական որակներով մոտ լինելով ձայնավորներին՝ կարող էր և ընկալվել իբրև ձայնավոր, մանավանդ որ հանդիպում էր երկբարբառի (= երկձայնի) կազմում՝ որպես երկրորդ բաղադրիչ: Կարծում ենք՝ այդ հանգամանքը վկայում է ևս մի բանի մասին. առնվազն գրաբարյան հայերենի սկզբնական շրջանում՝ 5-6-րդ դդ., **Ի** (յ)-ը ձայնորդ էր բառիս լիարժեք իմաստով: 2) Որքանով «Քերականությունը» հին հունարենի քերականական (ավանդական ըմբռնումով, այսինքն՝ ներառյալ հնչյունաբանական հարցերը) ձևերի և կառուցվածքի մասնակի հարմարեցումն էր գրաբարյան հայերենին, իսկ մինչև «Քերականությունը» մենք չենք ունեցել քերականական ավանդույթ, բնական է, որ հայերենի հնչույթները ևս տարբերակվեին ու դասակարգվեին ըստ հունական կաղապարի: Տվյալ դեպքում նկատի ունենք, օրինակ, կարձ **ռ** (օ)-ից բացի, նաև երկարի տարբերակումը, որի համար սկզբնապես կիրառվել է հենց հունական երկար **օ**-ի գրանշանը՝ **ω**-ն, որքանով մաշտոցյան այբուբենը միանգամայն հասկանալի պատճառով չի ունեցել այդպիսի գրանշան: Ավելի ուշ՝ առաջին անգամ, թերևս, Ս. Սյունեցու (VII-VIII դդ.) մեկնության մեջ, **ω**-ն փոխարինվում է **ռ**ով տառախմբով (Ադոնց, III, 2005, 199): 3) Ինչ վերաբերում է երկար **է** (ē)-ին, առնվազն V դ. այդպիսի հնչյունի (= հնչույթի) տարբերակման համար եղել են լեզվական հիմքեր (Петросян, I, 2016, 128-141. Պետրոսյան, II, 2017, 43-58. Պետրոսեան 2025, 43-58): Ավելին, հենց երկար **է** (ē)-ի առկայությունը գրաբարյան հայերենում «Քերականության» թարգմանչին և մեկնիչներին կարող էր հիմք տալ ճանաչելու նաև երկար **օ**-ի գոյությունը, որքանով այդ երկու հնչույթները հունական այբուբենում արտահայտված էին առանձին գրանշաններով, ի տարբերություն մյուս ձայնավորների, որոնց կարձ և երկար տարբերակները այբուբենում չունեին գրային տարբերակում: Կարծում ենք՝ այս երևույթը վկայում է այն մասին, որ այդ ժամանակ դեռևս չկար հին հունարենի մյուս ձայնավորների կարձ (α [a], ι [i], υ [u]) և երկար (ᾱ [a:], ῑ [i:], ῡ [u:]) տարբերակների՝ որպես ինքնուրույն հնչյունների (= հնչույթների) գիտակցումը, այլապես դրանց համար նույնպես կստեղծվեին առանձին գրեր:

(Ջահուկյան, 1954, 114-121): Ըստ այդմ՝ Թրակացու «Քերականության» թարգմանության և առաջին մեկնությունների ժամանակը կարող է համարվել V դ.:

Նշված հանգամանքներով հանդերձ, ձիշտ չի լինի, սակայն, ո՛չ «Քերականության» թարգմանչին և ո՛չ էլ մեկնիչներին համարել ինքնուրույնությունից զուրկ, պարզ կրկնօրինակողներ: Հակառակ դեպքում ինչպես բացատրել, որ նրանք ձայնավորների շարքում են գետեղում նաև **ը** (ə)–ն. չէ՞ որ հունարենն առհասարակ այդպիսի հնչույթ չի ունեցել:

4. Ու (ou)–ի տարաբնույթ մեկնաբանությունների հնարավոր պատճառները

Մեր դիտարկումներով, գրաբարյան **ու**–ի մեկնաբանությունն իբրև պարզ ձայնավորի հայերենագիտության մեջ սկիզբ է առնում Հ. Հյուբշմանից: Այն, որ Հ. Հյուբշմանը մեծ գիտնական էր և հայերենագիտության անուրանալի երախտավորներից մեկը, կասկածից վեր է, սակայն չպիտի բացառել, որ առանձին հարցերում նույնիսկ նրա նման փորձառու և զգուշավոր գիտնականը¹⁴ կարող էր վրիպել: Մասնավորապես, Հ. Հյուբշմանը Թրակացու «Քերականության» հետևողությամբ¹⁵, ըստ էության, ընդունում է, որ **ու**–ով և **ով** տառախմբով նշանակված հնչյունները գրաբարյան հայերենում ունեցել են ձայնավորական արժեք (հմմտ. «ձիշտ է նաև ձայնավորների նրա լիմա՝ «Քերականության» մեկնիչի՝ Վ.Պ.] բնորոշումը՝ **ա, ե, է, ի, ո, ւ, ով**, որպես **ā, é, ē, ī, ö, ü, o**, միայն **ու**–ն (= **ū**), ելնելով միայն նրանց՝ հայերենի ու հունարենի (ou) գրելաձևից, չպետք է դրանք երկբարբառների շարքին դասեր» (Հյուբշման, 2004, 63–64)): Սա նշանակում է, որ Հ. Հյուբշմանը, չնայած իր զգուշավորությանը, այնուամենայնիվ վրիպում է, երբ ընդունում է **ու**–ի և **ով**–ի (սկզբնական **օ**–ի)՝ որպես գրաբարյան հայերենի ձայնավորների մասին «Քերականության» մեջ տեղ գտած տեսա–

¹⁴ Եթե 1907–ին լույս տեսած «Հայերէն եւ դրացի լեզուները» գրքում Հ. Պետերսընը Հ. Հյուբշմանին մեղադրում է անհարկի զգուշավորության մեջ, ապա 1929–ին հրապարակված «Հայերէնի դիրքը» հոդվածում նա ակնհայտորեն ընդունում է Հյուբշմանի տեսակետների հեղինակավոր լինելը (Պետերսըն, 1907, 16. Պետերսըն, 1929, 187. Պետրոսյան, 2015, 291–292):

¹⁵ Հ. Հյուբշմանի արտահայտության ձևից, այն է՝ «Դիոնիսոս Թրակացու հայերեն մշակողը (շեղը՝ Վ.Պ.) » (Հյուբշման, 2004, 62), պարզ չէ՝ նկատի ունի «Քերականության» թարգմանչին, թե մեկնիչներից մեկին: Նկատի ունենալով, որ ձայնավորների թվում նշում է ոչ թե՛ **օ**, որն առկա է ինչպես «Քերականության» մեջ, այնպես էլ առաջին մեկնիչների տեքստերում, այլ ով տառախումբը, կարելի է ենթադրել, որ խոսքը Ս. Սյունեցու մասին է, որովհետև, որքանով մենք ենք նկատել, առաջին անգամ Սյունեցու մեկնության մեջ է **օ**–ի փոխարեն նշվում **ով** (ov):

կետը: Ավելին, Հ. Հյուբշմանը գրաբարի համար ենթադրել է Թիֆլիսի բարբառին մոտ հնչարտաբերություն (հմմտ. «... մեզ համար միայն հարցական է մնում, թե այն իմա՝ Թիֆլիսի բարբառը – Վ.Պ.] արդյոք 5-րդ դ. արտասանությունից էապես տարբերվո՞ւմ է, թե՞ ոչ») (Հյուբշման, 2004, 62): Միտք, որն էլ ավելի արտառոց է, քան նախորդը: Մեզ հայտնի չէ այդպիսի անհիմն պնդման այլ օրինակ: Իսկ **ու** (օւ)–ի՝ որպես գրաբարյան հայերենի պարզ ձայնավորի մասին Հ. Հյուբշմանի տեսակետին հետևել են հայերենագիտության երախտավորներից շատերը (Աբելյան, 1962, 282. Աճառյան, 1984, 578–579. Աղայան, 1986, 54–56. Джаукян, 1982, 26), և այսօր էլ այն շարունակում է մնալ ամենից տարածված պատկերացումը:

Այս կարգի լուրջ վրիպումները թելադրում են Հ. Հյուբշմանի տեսակետներին նույնպես չվերաբերվել անքննադատ կերպով:

5. **Վ** (v)–ի, **ւ** (ւ)–ի և **ու** (օւ)–ի հնչույթահնչյունաբանական արժեքները

Մեր կարծիքով, բոլոր դեպքերում էլ Մեսրոպյն ունեցել է կողմնորոշվելու մեկ հիմնական միջոց՝ հայերենի հնչյունների (իմա՝ հնչույթների՝ Վ.Պ.) արտաբերությունը, ըստ այդմ էլ երկբառադրիչ **ու** (օւ) *յառախմբով նշանակվել է երկբարբառային կազմություն, այլ ոչ թե պարզ ձայնավոր*: Օտար, տվյալ դեպքում՝ հունական գրային ավանդույթը, համաձայն որի՝ **օւ**–ն հին հունարենում արդեն իսկ արտաբերվում էր որպես պարզ [u] ձայնավոր, և Մաշտոցն էլ իբրև թե հետևել է այդ սկզբունքին, հայերեն **ու** (օւ)–ի դեպքում չի կարող ունենալ ուղղորդող նշանակություն: Դեռ չենք ասում այն մասին, որ խնդրահարույց է նաև հին հունարենի **օւ**–ին V դ. պարզ [u] ձայնավորի հնչյունական արժեք վերագրելու միտքը: Մեր կարծիքով, դա նույնն է, եթե ասենք, որ V դ. բաղաձայնահաջորդ և ձայնավորանախորդ դիրքում (հմմտ. **աչռի, բռւէճ, լեզռի, ուրռական** և այլն) այսպես կոչված «բաղաձայնական» **ու** (օւ)–ն ուներ շփական **վ** [v]–ի հնչյունական արժեք, որովհետև այժմ, ըստ ավանդական արտասանության, մենք այն կարդում ենք իբրև [v]: Բայց չէ որ դա հետագա դարերում երկբարբառային **ու** (օւ)–ի՝ հնչյունափոխությամբ առաջացած արտասանությունն է:

Կարծում ենք՝ վերոշարադրյալից հետևում է, որ գրաբարյան **ու** (օւ)–ին պարզ ձայնավորի արժեք վերագրելու հիմքեր չկան: **Ու** (օւ)–ի

հնչույթահնչյունական իրական բնութագիրը, ինչպես գրաբարյան մյուս երկրաբառակերպերի դեպքում, արտացոլում է հենց նրա երկտառ գրությունը: Իսկ այն, որ առանձին դեպքերում **ու** (օւ)–ն կարող էր դրսևորել նաև պարզ ձայնավորին բնորոշ վարքագիծ, ինչպիսին է **ու** > **ը** (// ծ) հնչյունափոխությունը, ըստ իս՝ դարձյալ **ու** (օւ)–ի երկբարբառակերպային բնույթի վկայություն է՝ որպես հնչարտաբերական և գործառական հատկանիշներով երկբարբառի և ձայնավորի միջև գտնվող անցումային հնչյուն (/հնչույթ):

Լինելով տարբեր հնչույթներ, բնականաբար, **վ** (v)–ը և **ւ** (u)–ն ունեցել են նաև տարբեր հնչյունական արժեքներ. **վ** (v)–ը շրթնատամնային արտաբերությամբ բաղաձայն էր, իսկ **ւ**–ը՝ երկշրթնային արտաբերությամբ ձայնորդ (= կիսաձայն): Հնդեվրոպական հին լեզուներում, այդ թվում՝ հին հայերենում, ձայնորդները ձայնաբանական առումով բաղաձայններից ու ձայնավորներից տարբեր՝ լիովին ինքնուրույն հնչույթներ էին: Ասվածի վկայություն կարող է համարվել այն, որ ձայնավորը կարող էր հերթագայվել կիսաձայն **ւ** (u)–ի հետ (հմմտ. **աղաւնի** – **աղանշոյ**, **գերի** – **գերշոյ**, **կենդանի** – **կենդանշոյ**, **պատասխանի** – **պատասխանշոյ**, **Արծրունի** – **Արծրունշոյ** և այլն. երկրորդները առաջինների եզ. թ., սեռ.–տր. հլ. ձևերն են), կամ, դիրքով պայմանավորված, փոխարինվել կիսաձայն **յ**–ով (հմմտ. **ի հաւրէ** «հորից», **ի հարանց** «հայրերից», բայց՝ **յաւրէ** (/յօրէ) «օրվանից», **յաւուրց** «օրերից», **ի գետոյ** «գետից», բայց՝ **յորդոյ** «որդուց»), իսկ բաղաձայնը չէր կարող հնչյունափոխվել ոչ կիսաձայնի, ոչ էլ, առավել ևս, ձայնավորի:

Նկատի ունենալով **ւ** (u)–ի կիրառության դիրքերի հնչյունական միջավայրի բազմազանությունը՝ տրամաբանական է կարծել, որ տարբեր դիրքերում հանդիպող **ւ** (u)–ն ունեցել է հնչարտաբերական յուրահատկություններ՝ որպես միևնույն հնչույթի առանձնահնչյունը կամ հնչակը (phone / фон)¹⁶: Այսպես, երկու ձայնավորի միջև դիրքում (հմմտ. **աւազ**, **բաշիղ** «լաբիրինթոս», **նաւազ** (–ի) «նավաստի» և այլն) **ւ** (u)–ն ունեցել է, թերևս, շրթնատամնային [վ]–ին մոտ, այսինքն՝ բաղաձայնական հնչարտաբերություն, իսկ ձայնավորահաջորդ և բաղաձայնանախորդ (հմմտ. **արդեաւք**, **արիւն** (արեան), **բեւր**, **հարեւր** (–ոյ), **նաւթ** (–ի/–ոյ) և այլն), ինչպես նաև բառավերջի դիրքերում (հմմտ. **թիւ**

¹⁶ ՄՀԴ–ում *հնչակի* նշանակությամբ կիրառում են ռուս. *вариация* բառը (Реформатский, 1967, 215–217), որի հայերեն համարժեքը չունենք. *փարբերակ*–ը համապատասխանում է նրանց *вариант*–ին, իսկ սա էլ ընդհանուր առմամբ համապատասխանում է *այլահնչակ*–ին ըստ դեակրիպիվ հնչույթաբանության:

(սեռ. թուղ), **նաւ** և այլն)՝ կիսաձայնային, այն է՝ բուն ձայնորդական: Նշված արտասանությունները, սակայն, հնչյունաբանական իրողություններ էին, բայց ոչ երբեք՝ հնչյութաբանական: Հնչյութաբանորեն բոլոր դիրքերում արտաբերվող **ւ** (ւ)–երը միևնույն ձայնորդ հնչյութի՝ հնչյունական միջավայրով պայմանավորված արտասանական տարբերակներն էին:

Եզրակացություններ

Սույն քննությունից հետևում է, որ 1) գրաբարյան հայերենի **վ** (v)–ը և **ւ** (ւ)–ը ինքնուրույն հնչյուներ էին, հետևաբար նրանց միջև լրացուցիչ բաշխման հարաբերությունների մասին խոսք լինել չի կարող. 2) հնչարտաբերական հատկանիշներով **վ** (v)–ը բաղաձայն էր, իսկ **ւ** (ւ)–ը կիսաձայն–ձայնորդ. 3) երկգիր **ու** (ou)–ով նշանակվել է երկբարբառակերպ հնչյութ, այլ ոչ թե պարզ ձայնավոր՝ [u]:

Վարդան 2. Պետրոսյան (Երևանի պետական համալսարան) – Գիտական հետաքրքրությունների տիրույթում են համեմատական հնդեվրոպաբանության, լեզվի տեսության, կառուցվածքային լեզվաբանության, պատմահամեմատական հայերենագիտության, ընդհանուր և հայ հնչյութաբանության հարցերը:

Համառոտագրություններ

1. ОЯ - Общее языкознание
2. ОЯ(ВСЯ) – Общее языкознание (внутренняя структура языка)
3. ОНС – Основные направления структурализма

Գրականության ցանկ

1. **Աբեղյան, Մ.** (1936). *Գրաբարի քերականություն*, Եր., «Պետհրատ».
2. **Աբեղյան, Մ.** (1974). *Երկեր*, հատ. 2, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 710-822.
3. **Աբեղյան, Մ.** (1962). *Մեսրոպ Մաշտոցը և հայ գրի ու գրականության սկիզբը* // «Մեսրոպ Մաշտոց», Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 242-305.
4. **Աբրահամյան, Ա.** (1976). *Գրաբարի ձեռնարկ*, Եր., «Լույս».
5. **Ադոնց, Ն.** (2008). *Երկեր*, հատ. Գ, Եր., ԵՊՀՀ.

6. Աղայան, Է. (1964). *Գրաբարի քերականություն*, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն.
7. Աղայան, Է. (1986). *Մեսրոպ Մաշտոց*, Եր., ԵՀՀ.
8. Աճառյան, Հր. (1984). *Հայոց գրերը*, Եր., ԵՀՀ.
9. Առձեռն բառարան հայկազնեան լեզուի (1988). Անթիլիաս: Տպարան Կաթողիկոսության Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ.
10. Համբարձումյան, Վ. (2018). *Գրաբարի ձեռնարկ*, Եր., «Էդիթ պրինտ».
11. Հյուբշման, Հ. (2004). *Հայագիտական ուսումնասիրություններ*, Եր., ԵՀՀ.
12. Ղազարեան, Ռ. (2004). *Գրաբարի բառարան*, «Անթիլիաս»: Տպարան Կաթողիկոսության Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ.
13. Ղազարյան, Ս. (1961). *Հայոց գրական լեզվի պատմություն*, Եր., Հայպետհրատ.
14. Մարկվարտ, Հ. (1962). *Հայոց այբուբենի ծագումը և Ս. Մաշտոցի կենսագրությունը* // «Մեսրոպ Մաշտոց», Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 117-180.
15. Մուրադյան Հ. (1982). *Հայոց լեզվի պատմական քերականություն*, հատ. I, Հնչյունաբանություն, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն.
16. Պեղերսըն, Հ. (1904). *Նպաստ մը հայ. լեզուի պատմության*, Վիեննա: Մխիթարեան տպարան.
17. Պեղերսըն, Հ. (1929). *Հայերէնի դիրքը* // «Հանդէս ամսօրեայ», I, 117-121. II, 178-190.
18. Պետրոսեան, Վ. (2025). Գրաբարեան հայերէնի Է (ե) ծայնաւորի հնչոյթաբանական բնութագրերը // *Էջմիածին*, II, 43-58.
19. Պետրոսյան, Վ. (2022). *Եռաբարբառային և քառաբարբառային կազմութիւնները հին հայերէնում (համաժամանակեայ քննութիւն)* // «Էջմիածին», VI, 128-136.
20. Պետրոսյան, Վ. (2015). *Հայերենագիտության երկու հիմնահարց ըստ Հովգեր Պեղերսընի* // Պետրոսյան Վ., Ընդհանուր և հայ լեզվաբանության հարցեր, Եր., «Փրինթինֆո», 277-297.
21. Պետրոսյան, Վ. (2023). *Հին հայերենի երկբարբառային և եռաբարբառային կազմությունների հարցի շուրջ (համաժամանակյա քննություն)* // *ԲԵՀ. Բանասիրություն*, I, 57-67.
22. Պետրոսյան, Վ. (2017). *Հին հայերենի ծայնավորական համակարգի ծագումը և հնչաբանական արժեքայնությունը* // *ԲԵՀ. Հայագիտություն*, II, 43-58.
23. Պետրոսյան, Վ. (2015). *Հնչոյթի գաղափարի սկզբնավորումը և հնչոյթաբանական գիտակարգը* // Ընդհանուր և հայ լեզվաբանության հարցեր, Եր., «Փրինթինֆո», 60-82.
24. Զահուկյան, Գ. (1954). *Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում*, Եր., ԵՀՀ.
25. Սոսյուր, Ֆ. դը (2008). *Ընդհանուր լեզվաբանության դասընթաց*, Եր., «Փրինթինֆո».
26. Засорина Л. (1974). *Введение в структурную лингвистику*. Москва: «Высшая школа».
27. Зиндер Л. (1979). *Общая фонетика*. Москва: «Высшая школа».
28. Лайонз Дж. (1978). *Введение в теоретическую лингвистику*. Москва: «Прогресс».
29. Маррь Н. (1903). *Грамматика древнеармянского языка: Этимология*, Санкт-Петербург. Типография Императорской Академіи Наукъ.
30. *Общее языкознание* (1983). Минск: «Высшая школа».
31. *Общее языкознание (внутренняя структура языка)* (1972). Москва: «Наука».
32. *Основные направления структурализма* (1964). Москва: «Наука».

33. **Панов, М.** (1979). *Современный русский язык. Фонетика*. Москва: «Высшая школа».
34. **Петросян, В.** (2016). *Диахроническая типология фонем Է в древнеармянском и Ӧ в старославянском языках* // Հիմնախնդիրներ հնդգր, I, сс. 128-141.
35. **Реформатский, А.** (1967). *Введение в языковедение*. Москва: “Просвещение”.
36. **Соссюр, Ф. де** (1977). *Труды по языкознанию*. Москва: “Прогресс”.
37. **Трубецкой, Н.** (2000). *Основы фонологии*, 2-е изд. Москва: «Аспект Пресс».
38. **Туманян, Э.** (1971). *Древнеармянский язык*. Москва: «Наука».
39. **Meillet, A.** (1936), *Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique*. Vienne: Imprimerie des PP. Mekhitharistes.

Bibliography (Latin Script)

1. **Abeghyan M.**, Grabari k'erakanut'yun, Yerevan, Pethrat, 1936 (**In Armenian**).
2. **Abeghyan M.**, Erker, h. VI, Yerevan, 1974, HSSH GA hratarakchut'yun, edzh 710-822 (**In Armenian**).
3. **Abeghyan M.**, Mesrop Mashtots'ě ev hay gri u grakanut'yan skizbě // «Mesrop Mashtots'», Yerevan, HSSH GA hratarakchut'yun, 1962, edzh 242-305 (**In Armenian**).
4. **Abrahamyan A.**, Grabari dzeñnark, Yerevan, “Luys”, 1976 (**In Armenian**).
5. **Acharyan Hr.**, Hayots' greř, Yerevan, YHH, 1984 (**In Armenian**).
6. **Adonts' N.**, Erker, h. III, Yerevan, YPHH, 2008, edzh 1-306 (**In Armenian**).
7. **Aghayan Ė.**, Grabari k'erakanut'yun, Yerevan, HSSH GA hratarakchut'yun, 1964 (**In Armenian**).
8. **Aghayan Ė.**, Mesrop Mashtots', Yerevan, YHH, 1986 (**In Armenian**).
9. *Ārdzeñ bařaran haykaznean lezui*, Ant'ílias, Tparan kat'oghikosut'yan Hayots' Metsi Tann Kilikioy, 1988 (**In Armenian**).
10. **Dzhahukyan G.**, K'erakanakan ev ughghagrakan ashkhatut'yunnerě hin ev midzhnadaryan Hayastanum, Yerevan, YHH, 1954 (**In Armenian**).
11. **Ghazarean Ė.**, Grabari bařaran, Ant'ílias, Tparan kat'oghikosut'yan Hayots' Metsi Tann Kilikioy, 2004 (**In Armenian**).
12. **Ghazaryan S.**, Hayots' grakan lezvi patmut'yun, Yerevan, Haypethrat, 1961 (**In Armenian**).
13. **Hambardzumyan V.**, Grabari dzeñnark, Yerevan, “Ėdit' print”, 2018 (**In Armenian**).
14. **Hübschmann H.**, Hayagitakan usumnasirut'yunner, Yerevan, YHH, 2004 (**In Armenian**).
15. **Lyons J.**, Vvedenie v teoreticheskuyu lingvistiku, Moskva, “Progress”, 1978 (**In Russian**).
16. **Markwart Jo.**, Hayots' aybubeni tsagumě ev S. Mashtots'i kensagrut'yuně // «Mesrop Mashtots'», Yerevan, 1962, edzh 117-180 (**In Armenian**).
17. **Marr N.**, Grammatika drevnearmyanskago yazyka: Ėtimologiya, Sankt-Peterburg, Tipografiya Imperatorskoj Akademii Nauk. 1903 (**In Russian**).
18. **Meillet A.**, Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, Vienne, Imprimerie des PP. Mekhitharistes, 1936 (**In French**).
19. **Muradyan H.**, Hayots' lezvi patmakan k'erakanut'yun, h. 1, Hnchyunabanut'yun, HSSH GA hratarakchut'yun, Yerevan, 1982 (**In Armenian**).
20. *Obshchee yazykoznanie*, Minsk, “Vysshaya shkola”, 1983 (**In Russian**).
21. *Obshchee yazykoznanie* (vnutrennaya struktura yazyka), “Nauka”, Moskva, 1972 (**In Russian**).
22. *Osnovnye napravleniya strukturalizma*, Moskva, “Nauka”, 1964 (**In Russian**).
23. **Panov M.**, Sovremennij russkij yazyk. Fonetika, Moskva, “Vysshaya shkola”, 1979 (**In Russian**).
24. **Pedersēn H.**, Npast mē hay. lezui patmut'yan, Vienna, 1904 (**In Armenian**).

25. **Pedersēn H.**, Hayereni dirk'ē // *Handēs amsoreay*, 1929, № 1, edzh 117-121. № 2, edzh 178-190 (**In Armenian**).
26. **Petrosyan V.**, Grabarean hayerēni Է (ē) dzaynavori hnchoyt'abanakan bnut'agrerē // *Ēdzhmiatsin*, 2025, № 2, edzh 43-58 (**In Armenian**).
27. **Petrosyan V.**, Diakhronicheskaya tipologiya fonem Է v drevnearmyanskom i Է v staroslavjanskom yazykakh // *Hayagitut'yan harts'er*, 2016, I, str. 128-141 (**In Russian**).
28. **Petrosyan V.**, Erabarbarayin ev qarabarbarayin kazmut'yunnerē hin hayerenum (hamazhamakya k'nnut'yun) // *Ēdzhmiatsin*, 2022, № 6, edzh 128-136 (**In Armenian**).
29. **Petrosyan V.**, Hayerenagitut'yan erku himnaharts' ēst Holger Pedersēni // **Petrosyan V.**, Ēndhanur ev hay lezvabanut'yan harts'er, "P'rintinfo", Yerevan, 2015, edzh 277-297 (**In Armenian**).
30. **Petrosyan V.**, Hin hayereni erkbarbarayin ev erabarbarayin kazmut'yunneri harts'i shurdzh (hamazhamakya k'nnut'yun) // *BYH. Banasirut'yun*, 2023, № 1, edzh 57-67 (**In Armenian**).
31. **Petrosyan V.**, Hin hayereni dzaynavorakan hamakargi tsagumē ev hnchabanakan arzhēk'aynut'yunē // *BYH. Hayagitut'yun*, 2017, № 2, edzh 43-58 (**In Armenian**).
32. **Petrosyan V.**, Hnchuyt'i gaghap'ari skzbnavorumē ev hnchuyt'abanakan gitakargē // **Petrosyan V.**, Ēndhanur ev hay lezvabanut'yan harts'er, Yerevan, "P'rintinfo", 2015, edzh 60-82 (**In Armenian**).
33. **Řeformatskij A.**, Vvedenie v yazykovedenie, Moskva, "Prosveshchenie", 1967 (**In Russian**).
34. **Sossyur F. dē**, Ēndhanur lezvabanut'yan dasēnt'ats', Yerevan, "P'rintinfo", 2008 (**In Armenian**).
35. **Saussure F. de**, Trudy po yazykoznaniiyu, Moskva, "Progress", 1977 (**In Russian**).
36. **Trubets'koj N.**, Osnovy fonologii, Moskva, "Aspekt Press", 2000 (**In Russian**).
37. **Tumanyan Ē.**, Drevnearmyanskij yazyk, Moskva, "Nauka", 1971 (**In Russian**).
38. **Zassorina L.**, Vvedenie v strukturnuyu lingvistiku, Moskva, "Vysshaya shkola", 1974 (**In Russian**).
39. **Zinder L.**, Obshchaya fonetika, Moskva, "Vysshaya shkola", 1979 (**In Russian**).